

ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒՋԱՆԴԱՑՈՒ
ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

(Մենդյան 120 և մահվան 50-ամյակի առթիվ)

Բանաս. գիտ. դոկտոր Ա. Ա. ԱՐԲԱՆՄՅԱՆ

Հայ դասական բանասիրության լաստակաշատ երախտավորների շարքում պատկանելի տեղ ունի բազմաշխատ գիտնական Նորայր Բյուզանդացին (Ստեփան Գազեզյան-Ճիզմեճյան-Քերզյան)։

Նա ծնվել է 1845 թ. մարտի 4-ին՝ Կոստանդնուպոլսում։ Սկզբնական կրթությունն ստացել է Բերայի Մխիթարյան դպրոցում, ապա 1854 թ. աշնանը տեղափոխվել է Վենետիկ, Ս. Ղազարի վանքը, որտեղ շարունակել է ուսումը՝ աշակերտելով Ալիշանին և այլ գիտնականների։ Մասնագիտացել է հայ հին և միջնադարյան մատենագրության ուղղությամբ, առանձնակի հակում ու ջանասիրություն ցուցաբերելով լեզուների ուսումնասիրության մեջ։ «1857-ին ի վեր մասնաւոր եռանդութեամբ պարապած եմ հայերէն և զաղղիերէն լեզուաց ուսման», — գրել է Նորայր Բյուզանդացին հետագայում։ Ստանալով գիտելիքների մեծ պաշար՝ նա վաղ հասակից սկսել է գիտական գործունեությունը, որին զուգահեռ մի որոշ ժամանակ մանկավարժական աշխատանք է կատարել։ 1866—1868 թթ. հայերենի և ֆրանսերենի ուսուցիչ է եղել Վենետիկի Ռաֆայելյան, 1870—1872 թթ.՝ Քաղկեդոնի (Գատր Քեոյ) Մխիթարյան վարժարաններում¹։ 1866 թ. ձեռնադրվել է քահանա, 1867 թ. վարել է «Բազմավեպ»-ի տեսչությունը, 1868—1869 թթ. եղել է մատենագրարանապետ²։ Պիոս պապի օրոք մասնակցել է հասունյանական և հակահասունյանական պայքարին՝ որպես հակահասունյանական³։ Յոթանասնական թվականներին հրատարակել է հոգեվոր կոչումից և շարունակել է ծավալել իր գիտական գործունեությունը որպես աշխարհական՝ ստորագրելով Նորայր Ն. Բյուզանդացի (Իբրև հոգևորական կոչվում էր Հարություն Քերզյան)։

Այդ թվականներին նա իր գիտական ծրագրերի իրագործման ուղղությամբ աշխատում է Կոստանդնուպոլսի և Փարիզի գիտական շրջաններում ու գրա-

¹ Նորայր Բյուզանդացու կենսագիր Ն. Ակիբյանը նրա ծննդյան թվականը նշում է 1844-ը։ Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1921, № 1—2, էջ 35։ Այսպես բեզունում են և ուրիշները (Հմմտ. «Էջմիածին», 1964, 1—Ք, էջ 35—40 և այլն)։ Մենք տալիս ենք ըստ Նորայր Բյուզանդացու, վերջնելով նրա՝ Հայկ Տեր-Աստվածատրյանցին ուղղած պատասխան-նամակից։ Վերջին լեքնակենսագրական բնույթ ունի և արժեքավոր տվյալներ է պարունակում։ Սակայն, ցավոք «բոսի, սահմանափակ է, նախ այն պատճառով, որ Բյուզանդացին պատասխանել է առաջադրված որոշակի հարցերի և ապա՝ իր ընդգրկում հեղինակի կյանքի վերջին մեկուկես տասնամյակը (գրված է 1900 թ. մարտի 15-ին)։ Հմմտ. «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1962, № 3, էջ 186—187։

² «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1962, № 3, էջ 186։

³ Տե՛ս նույն տեղում։

⁴ Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1921, № 1—2, էջ 36։

⁵ Տե՛ս «Մշակ», 1892, № 135։

դարաններում: Ասյա հանդիպելով Շվեդիայի արքունական լուսանկարչուհի Սելմա Յակոբսոնին՝ ամուսնանում է նրա հետ և տեղափոխվում Ստոկհոլմ, որտեղ բնակվում է 22 տարի՝ 1882-ից մինչև 1904 թ.:

Դա Բյուզանդացու կյանքի ամենաբեղմնավոր շրջանն էր, որը երախտավոր գիտնականն ամբողջովին նվիրաբերեց իր սիրած գործին՝ հայոց լեզվի, հայ հին ու միջնադարյան մատենագրության հետազոտմանը:

Ահա թե ի՞նչ է գրում Այ. Արևյանը, որը Ստոկհոլմում եղած ժամանակ այցելել է նորայր Բյուզանդացուն. «Չնայելով որ պ. Բյուզանդ ապրում է Ստոկհոլմի նման մի գեղեցիկ և ուրախ բաղաբույր, շնայելով որ ամենայն միջոց ներում է նրան անձնատուր լինելու մայրաքաղաքի կյանքին, բայց պ. Բյուզանդ համարյա շարաթներով փակված կյանք է անցնում... նա զբաղված է միայն և միմիայն մեր նախնայց մատենագրության ուսումնասիրությամբ»⁶:

Այն, ինչ կատարել է նորայր Բյուզանդացին Ստոկհոլմում, իր ժողովրդի միջավայրից կտրված, հայագիտական կենտրոններից հեռու, միայն զարմանք է պատճառում մարդու: Եւ հնարավոր կլինե՞ր անել անսահման նվիրվածության, անասելի աշխատասիրության, անհողողող կամքի ու տոկունության շրջանորհիվ: Վաստակից կարելի է դատել, որ նորայր Բյուզանդացին օժտված է եղել այդ հատկանիշներով:

Նորայր Բյուզանդացին, սակայն, զոհ չի եղել իր արածից և համոզված է եղել, որ նյութական ու բարոյական պատշաճ օգնության դեպքում ավելի շատ բան կարող էր անել, կարող էր իրագործել իր լայն ծրագրերը: «Իմ անձիս մասին, — գրել է նա, — միայն կ'ըսեմ որ շատ ատելի ծառայություն կարէի մատուցանել իմ սիրելի Ազգին եթէ գտած ըլլայի զայն նիւթական և բարոյական ձեռնադրություն զոր կը յուսայի... բարի փափագներով լցուած էի, փափագներես և ոչ մին կատարեցաւ: Ինչհամար զաղտնիք հայերէն լեզուի և գրականութեան պիտի իջնին ընդ իս ի գերզման»⁷:

Նրա գիտական աշխատանքի համար անձնական զբաղար:սներ որքան էլ հարուստ լինե՞ր, հեռու էր բավարար լինելուց: Բյուզանդացին նամակագրական կապեր է հաստատում Վիեննայի, Փարիզի, Կոստանդնուպոլսի, Պետերբուրգի, Քիֆիսի, Էջմիածնի և այլ տեղերի շատ հայագետների հետ, ստանում գրքեր ու այլ նյութեր:

Նրա պարապմունքների համար հաց ու ջրի պես անհրաժեշտ էին հայկական հին ձեռագրերը, մինչդեռ մատենագրանները շատ հեռու էին, իսկ ժամանակին իր իսկ կատարած ընդօրինակումներն էլ՝ սահմանափակ: Այդ պատճառով էլ իր ծրագրերին անդրադառնալով՝ նորայր Բյուզանդացին գրել է. «Բարեւա մնան ուրեմն զըզագիրք ուր որ են, և ես զբաղիմ մի միայն տպագրելալ մատենագրութեամբք նախնեաց»⁸:

Սրանով, իհարկե, հարցը չի փակվել: Նրա նամակներից ու հրատարակված աշխատություններից երևում է, որ դիմել է գանազան անձանց, ձեռագրեր է խնդրել, ուսումնասիրել և շատերն էլ անձամբ ընդօրինակել: Հիշատակենք մի երկու փաստ: Ելուտ քահանա Աղանյանին 1898 թ. դեկտեմբերի 28-ին ուղղած նամակում նորայր Բյուզանդացին գրել է. «Վսեմական Տէր Եղեանցի ձե-

⁶ Ա. Արևյան, Իմ ծանոթությունս պ. Նորայր Բյուզանդացու հետ, «Մշակ», 1892, N 135:

⁷ «Բաները Հայաստանի արխիվներէ», 1962, N 3, էջ 137:

⁸ «Քննասիր. ինքնաբերութիւնք Նորայրի», պրակ առաջին, Ստոկհոլմ, 1887, էջ 7:

ուղղիրն երկու տարի մնաց քովս...»⁹։ Նույն Աղանյանին ուղղած 1898 թ. հունիսի 6-ի նամակից երևում է, որ թիֆլիսաբնակ Մ. Քամամշյանցը 1897 թ. Ստոկհոլմում եղած ժամանակ Նորայր Բյուզանդացուն տեղեկացրել է հորենացու պատմության մի ձևադրի՝ իր մոտ գտնվելու մասին։ Բյուզանդացին էլ դիմել է Աղանյանին՝ խնդրելով միջնորդել Քամամշյանցին հիշյալ ձևադրի 3 ամսով Ստոկհոլմ ուղարկելու համար¹⁰։ Ահա նման միջոցներով, բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով ջանասեր դիտնականը շարունակել է իր աշխատանքը։

Նորայր Բյուզանդացին փափազել է հայագիտական ամբիոն հիմնել Եվեգիայի Ուսուսալա քաղաքի համալսարանում։ Եվ այդ մասին 1883 թ. Ստոկհոլմից գրել է իր մտերիմ բարեկամ, շվեդ հայտնի դիտնական Ալմիքլիստին, որը հիշյալ համալսարանի համեմատական լեզվաբանության պրոֆեսոր էր¹¹։

Հեռավոր հյուսիսում հայկաբանության մշակին ցնցել է իննսնական թվականների կոտորածների դուլժը, և այդ աղետալի դեպքերի մասին նա շվեդերեն հոդվածներ է հրատարակել Ստոկհոլմի լրագրերում, ինչպես վկայում է ինքը¹²։

Վրա հասած ընտանեկան դժբախտությունը (կնոջ մահը՝ 1899 թ. մարտի 30-ին¹³) և առողջական վիճակի աստիճանական վատացումը հնարավորություն չեն տալիս Նորայր Բյուզանդացուն այլևս մնալ Ստոկհոլմում։ Բժիշկները խորհուրդ են տալիս տեղափոխվել հարավ։ Եվ նա 1904 թ.¹⁴ Հռոմի վրայով անցնում է Վենետիկ ու հաստատվում այնտեղ՝ հուսալով, որ Ս. Ղազարի կղզու Մխիթարյան մատենադարանի ընձեռած հնարավորություններով ավելի դյուրությամբ կշարունակի գիտական աշխատանքը¹⁵ և միաժամանակ մեղմ բնության մեջ կբարելավի առողջական վիճակը։ Սակայն հիվանդությունը դնալով խորանում է։ Չնայած դրան՝ նա շարունակում է աշխատել։ 1905 թ. «Բազմավեպ»-ում հրատարակում է իր աշխատությունը Քովմա Արծրունու երկի բնագրի մասին¹⁶, մի ընդարձակ հոդվածով մասնակցում է Վիննայի Մխիթարյան միաբանության «Հուշարձան» հոբելյանական ժողովածուի հրատարակման գործին¹⁷, շարունակում է հետազոտել հայ միջնադարյան շափածո ստեղծագործությունները և այլն։

9 «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1962, N 3, էջ 179։ 9. Արզարյանի «Նորայր Բյուզանդացու անտիպ երկերը» հոդվածում մեջբերված ծանոթությունից երևում է, որ դա Գրիգոր Մազիստրոսի թղթերի 4. նկյանցի ընթերցանությունն է եղել, որը և արտագրել է Նորայր Բյուզանդացին Ստոկհոլմում (15 օգոստոսի — 5 նոյեմբերի 1896 թ.)։ Տե՛ս «Էջմիածին», 1964, Ը—Ք, էջ 38։

10 «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1962, N 3, էջ 179։

11 «Էջմիածին», 1949, Մարտ — ապրիլ, էջ 67։

12 «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1962, N 3, էջ 187։

13 Տե՛ս Խրիմյան Հայրիկին ուղղած նամակը. «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1962, N 3, էջ 188։

14 Ըստ ոմանց՝ 1903 թ.։

15 «Հանդես ամսօրյա», 1921, N 1—2, էջ 86։

16 «Բազմավեպ», 1905, թիվ 5, էջ 227—231, թիվ 6, էջ 264—271, թիվ 7—8, էջ 328—337, թիվ 9, էջ 398—407, թիվ 10, էջ 464—476։

17 «Քննություն Մալխասեան հրատարակութեանց Ազաթանգեղոսի և Ղազարայ Փարպեցոյ» «Յուշարձան. գրական ժողովածոյ», Վիննա, 1911, էջ 161—174։

վաստակած գիտնականն իր մահկանացուն կներում է վենետիկում 1915 թ.¹⁸։ Նրա աճյունը, կտակի համաձայն, 1924 թ. փոխադրվում է Ստոկհոլմ և թաղվում նախօրոք իր իսկ կառուցած գերեզմանում։

Հսկայական է Նորայր Բյուզանդացու թողած գիտական ժառանգությունը, որը կուտակվել է հեղինակի գերմարդկային անդադրում աշխատանքի գնով։ Ցավոք պետք է նշել, որ ժամանակին հրապարակվել է զրա միայն մի մասը։ Խիստ մեծ քանակ են կազմում անտիպ գործերը, որոնք իր ողջ ունեցվածքի հետ (անձնական գրադարանը, մի խոշոր դրամագլուխ) Բյուզանդացին հատուկ կտակով նվիրել է շվեդական կանանց Ֆրեդրիկա-Բրեմեր-Ֆորբունդետ բարեգործական ընկերության Ստոկհոլմի կենտրոնին¹⁹։ Շվեդիայում (Գյոտեբորգում) գտնվող մեծ ու փոքր ձեռագրերի թիվը մոտ 130 է²⁰։ Դրանցից մի քանիսը հանված են ժայռափնի վրա և ուղարկված են Հայաստան՝ Մաշտոցի անվան մատենադարանին ու գիտությունների ակադեմիայի գրադարանին²¹։

Այս խոշոր գիտնականի մեծ վաստակի ամբողջական պատկերն ուրվագծելու համար, անշուշտ, պետք է բնութագրել թե՛ տպագիր և թե՛ անտիպ գործերը։ Սակայն այս հոդվածում մենք հիմնականում կանդ կառնենք հրապարակված ժառանգության վրա։

Նորայր Բյուզանդացին բանասեր է՝ բառիս ամենայն իմաստով, նրա հաճար շատ թանկ են եղել ուսումնասիրության նյութ կազմող բնագրերի նույնիսկ աննշան տվյալները։ «Ճառերնտիրներու, ոսկիփորիկներու, տաղարաններու ամենն՝ շնչին գրութիւնն... յարդի է ինձ...», — գրել է նա մի առիթով²²։

Նրա բանասիրական աշխատանքի մեջ կարելի է տարբերել երկու հիմնական ուղղություն²³՝ բնագրագիտություն՝ բնագրերի ճշտման, վերականգնման, լուսարանման, իսկություն ու հեղինակների որոշման, պատմա-ժամանակագրական, լեզվա-ոճական և սրանց հետ կապված նման այլ խնդիրների ընդգրկումով, բառարանագրություն ու բառագիտություն՝ բառարանների կազմում, բառապաշարի, գիտական անվանումների (տերմինների), բառերի ձևերի ու իմաստների, գործածության վավերականության և սրանց հետ առնչվող գանազան իրողությունների հետազոտում ու բննարկում։ Այս ուղղությունները սերտորեն կապված են միմյանց հետ և շատ կողմերով լրացնում են իրար։ Բյուզանդացու աշխատանքի սիրած ձևերից է եղել գիտական բնագատությունը. նրա գրչին են պատկանում այդ բնույթի մի քանի երկեր։

Առաջին հրապարակված գործը վերաբերում է 1867 թ. և կրում է «Մեր նախնեացմէ ձեռներնիս հասած ձեռագրերու ձեռքեր և երկու դրուածքներ» վերնագիրը²⁴։ Դրանով Հ. Յ. Ք. (Հարություն Քերզյան) ստորագրությամբ Նորայր Բյուզանդացին գիտական հասարակայնության ուշադրություն է ներկայացնում միջին դարերից մնացած ձեռագրական երկու հատված, որոնցից մեկը,

18 Ն. Ակիսյանը նշում է 1916 թ. և ավելացնում է, որ ամիսն ու օրը չի կարողացել գտնել։ Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1921, N 1—2, էջ 86։

19 Տե՛ս «Էջմիածին», 1949, մարտ — ապրիլ, էջ 66։

20 Տե՛ս նույն տեղում, էջ 65։

21 Դրանց բնութագիրը տրված է Գ. Արզաբյանի հոդվածում։ Տե՛ս «Էջմիածին», 1964, Ը—Թ։

22 1895 թ. հոկտեմբերի 31-ին Գ. Աղանյանին ուղղած նամակից. «Բաները Հայաստանի արխիվներին», 1962, N 3, էջ 178։

23 Չենք հաշվում թարգմանական աշխատանքը, որը հիմնական գրադմուք չի եղել Բյուզանդացու համար։

24 «Թագմավեպ», 1867, դեկտեմբեր, էջ 353—359։

ինչպես նշում է ինքը, Վաստակոց գրքից է, իսկ մյուսը թարգմանություն է ֆրանսերենից: Այդ բնագրերին կցված փոքրիկ ներածականում Բյուզանդացին բնորոշում է ձեռագրերի հրատարակման անհրաժեշտությունը, ապա շոշափում է բժշկական բառերի (անվանումների — տերմինների) օգտագործման հարցը: Տողատակում բերելով մի շարք օրինակներ՝ ցույց է տալիս, թե ինչպես կազմվել են շատ անհաջող անվանումներ, մինչդեռ դրանց ավելի հաջող համարձեքները վաղուց գործածություն են ունեցել հայ իրականության մեջ և առկա են հին ձեռագրերում, որոնք պետք է ուսումնասիրվեն ու կյանքի կոչվեն:

Սրան հաջորդող և առանձին գրքով լույս տեսած առաջին աշխատությունն է «Հայկական բառարանություն»-ը²⁵: Հեղինակն իր այս մատենիկը նվիրում է մեր նախնիների մատենագրական երկերը բնթերցողներին՝ «յուսումն և ի մշակություն հայ լեզուի»: Կտնում է, որ մեր ինքնուրույն և թարգմանական մատենագրության երկերը՝ սկսած հին ժամանակներից մինչև ուշ միջնադար, որոշ փոփոխություններ են կրել և ունեն ոչ սակավ աղավաղումներ ու մոթ տեղեր, որոնք դալիս են ձեռագրերը դադարափարոզների անհմտությունից կամ նախնիների երկերի «օտարալեզու» բնագրերը ուղիղ չիմանալուց, ուստի բնագրերի հիշյալ կարգի թերությունները պետք է վերացվեն ուղղիչ ու խնամքով կատարվող աշխատանքով: Նման աղավաղումներ, ինչպես և սխալ մեկնաբանություններ տեղ են գտել նաև բառարաններում, որոնք նույնպես պիտի վերացվեն: Երախտավոր գիտնականը ամբողջ խորությամբ գիտակցել է այդ գործի խիստ կարևորությունը և իր գործունեությամբ զինվորագրվել է դրան: Նա դրել է. «Այլում իմիք շեմ հետամուտ ի բազում ամաց յետէ, բայց եթէ սրբելոյ զՀայ դպրութիւնս և զՀայ բարբառս յամենայն օտար, կեղակարծ և անուղիղ իմացուածոց»: Եվ այդ աշխատությունն էլ դրա բնորոշ օրինակներից մեկն է: Առաջին գլխում քննված են տառերի նմանությունից (Ա/ՈՒ, Գ/Գ, Մ/Ս, Մ/Տ, Յ/Յ) առաջացած աղավաղումները, հարևան բառերի միացումից, մասերի խառնումից գոյացած փոփոխությունները, կետագրական այնպիսի սխալները, որոնք բացահայտորեն ազդում են բնագրերի բովանդակության վրա: Հաջորդ գլխում մի քանի երկերի մասնավոր քննություն է կատարված՝ սկսած Ծղնկից մինչև «Գիրք վաստակոց»: Վերջին մասում տրված է 20 բառերի քննությունը (աղբղբուկ, ամար, ամբետ, աստախոտոս, արօսի, բաշխ, բաստեն, բլիթէն, գետնախնձոր, զոյգոստատ, թաթառ, թոնձ, խարի, կոյշ, հօրորդութիւն, շագանակ, ուռամիջակ, տատան առնեմ, տիպ, բերքեշ): Քննությունը կատարված է տարբեր տեսանկյուններից, հայերեն ու նրա հետ առնչվող հինգ բառարանների (Ռոշբայի, Մխիթար Արբայի ու իր աշակերտների, Հայկազյան նոր, Զախչախյանի, Առձևոն) համեմատությամբ և բնագրային սկզբնաղբյուրների հիման վրա:

Բյուզանդացին հայտնում է հայոց լեզվի բնորոշակ բառարան կազմելու իր աշխատանքի մասին և միաժամանակ նշում է, որ հիշյալ բառերի քննությունը որոշակի օրինակներով ծանոթացնում է այդ բառարանի բնույթին: «...Կուզեմ փոքր ճաշակ մը տալ իմ Հայերէն լեզուի բնորոշակ բառարանիս, որոյ հիմունքը ձգած եմ տասն տարիէ ի վեր, բայց թէ առաստաղը ե՛րբ պիտի դնեմ՝ Աստուծոյ է միայն գիտելի:— Գրել է նա:— Հաւաքել ամենայն հայ բառ,

²⁵ «Հայկական բառարանություն — ուղղութիւնը բնթերցուածոց մատենագրութեանց նախնեաց և նշանակութեան բառից ինչ. գրեաց Նորայր Ն. Բիւզանդացի», Կոստանդնուպոլիս, 1380:

ոճ և դարձուած, և արձանագրել ըստ դարս դարս, սկսեալ ի Ծ դարէն մինչև ժէ-ին վերջըր,— խուզարկել իւրաքանչիւր բառի ծագումը և ստուգարանութիւնը,— որոշ որոշ սահմաններով ճշդել նշանակութիւնները և սէս պէս առմունքները,— ահաւասիկ երկու խօսքով իմ աշխատութեանս նկարագիրը»²⁶:

Բյուզանդացին պարզորոշ տեսնում է գործի ծանրութիւնը՝ նշելով, որ դա կուստաշահեր հատուկ գիտական օջախի, կարող էր իրագործվել գիտնականների միասնական ջանքերով, սակայն գառնութեամբ է ընդգծում դրանց բացակայութեան մասին. «Յիրաւի այսպիսի գործ մը առաւել պատկանաւոր և անկ էր շայկական կաճառի. բայց ո՛ր է այդ կաճառն, ո՛ր են այն գրագիտաց կամ ուսումնականաց ժողովներն, յորս զանազան կարծեաց կամ զանազան սկզբանց տէր անձինք գումարեալը յանուն հայութեան, յանուն դպրութեանց և ուսմանց, ձեռն ի ձեռն խառնեն, իրարու օգնեն և իրարմէ լուսաւորին»²⁷:

«Շայկական բառաքննութիւն» աշխատութեան մեջ շոշափված հարցերը թեմատիկ ընդգրկման առումով հետազոտում ևս դուրս չեկան հեղինակի հետազոտական աշխատանքի ոլորտներից և մի շարք այլ աշխատութիւնների ստեղծման հիմք դարձան: Դեռ 1892 թ. նորայր Բյուզանդացու վեր հանած, հետազոտած և ուղղած բնագրական սխալների ու աղավաղումների թիվը հասնում էր 10000-ի²⁸: Նրա ձեռագրերի մեջ ցույց է տրվում մի երկ, որտեղ ի մի բերված ու ամփոփված է այդ ահռելի նյութը²⁹: Դա շատ օգտակար, բայց ծանր ու հոգեմաշ աշխատանք է եղել և մեծ ջանքեր է խլել համբավավոր բանասիրից: Ն. Ակինյանին ուղղած մի նամակում նորայր Բյուզանդացին գրել է. «Գրութիս յոգնած է նախնեաց խանգարեալ տեղիներուն վերայ խորհելով խորհելով՝ որպէս զի գտնեմ զուղիղն: Երբեմն ամիսներ և տարիներ պետք եղած են մէկ սրբագրութեան համար»³⁰: Իսկ բառարանագրական գործերն էլ մի քանիսն են:

1884 թ. լույս է տեսնում Ֆրանսերեն-հայերեն հայտնի բառարանը³¹, որը այդ բառարանագրութեան անմահ կոթողներից մեկն է: Ստվարածավալ մի գործ (մոտ 1300 էջ, երկսյուն), որն իր բնույթով, անշուշտ, գերազանցում է իրեն նախորդած ֆրանսերեն-հայերեն երկու բառարաններին (Շ. Ավգերյանի՝ Վեներտիկ, 1812, 1840 և Ս. Էմինյանի՝ Վիեննա, 1853, 1871): Բառարանը նորայր Բյուզանդացուց խլել է 14 տարվա տքնաջան աշխատանք (գրվել է 1866—1879 թթ.): Ֆրանսերեն բառացանկը կազմելիս հեղինակը հենվել է էմիլ Լիարեի և ֆրանսիական ակադեմիայի հրատարակած բառարանների վրա՝ միաժամանակ օգտվելով Ավգերյանի ու Էմինյանի բառարաններից: Առանձնապէս մեծ արժեք է ներկայացնում հայերեն մասը, որտեղ բառային վիթխարի հարստութիւն է ամբարված: Այստեղ, սակայն, խիստ միակերպութիւն չկա: Թեև հեղինակն ամենից առաջ և հիմնականում նկատի է ունեցել զրարարը, բայց չի սահմանափակվել դրանով, դիմել է միջին հայերենին (ստորին հայերեն), ժամանակի աշխարհարարին, բարբառներին, ինչպէս նաև օգտագործել է նորա-

²⁶ Նույն տեղում, էջ 102:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Տե՛ս «Մշակ», 1892, № 135:

²⁹ Հմմտ. «Էջմիածին», 1964, Բ—Թ:

³⁰ Տե՛ս «Շանդուհ ամսօրյա», 1921, № 1—2, էջ 89:

³¹ «Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն հետեղութեամբ բառարանառն էմիլ Լիարէի և զաղղիական ակադեմիայ, յօրինեաց նորայր Ն. Քիզանդացի», Կոստանդնուպոլիս, 1884:

կազմ բառեր: Գրաբարյան բառերն ու դարձվածքներն ընտրելիս նա չի բավարարվել բառարանների նյութով, ջանասիրությամբ կարդացել է տպագիր, ինչպես և ձեռագիր մատենագրությունը ու քաղել պահանջվող համարժեքներ: Նա քաջ գիտակցել է, որ բազմաթիվ դանձեր կան թաղված գրչագրերում, և դրանք վերհանման ու օգտագործման համար տարիների ընթացքում աշխատել է Վենետիկի Մխիթարյան, Փարիզի ազգային, Կոստանդնուպոլսի ազգային և Անտոնյան, Միջագյուղի վերձանության թանգարանի մատենադարաններում: Միջին հայերենի բառագանձի համար հատկապես օգտվել է բժշկարաններից ու տաղարաններից: Բարբառային բառերի ցուցակներ է ստացել մի շարք մարդկանցից և այլն: Նորակազմ բառերից թիչ չեն այնպիսիները, որոնք համընդհանուր ճանաչում գտան՝ տարածվելով ոչ միայն արևմտյան, այլև արևելյան աշխարհագրորում:

Բառարանի հրատարակման ու տարածման գործում Նորայր Բյուզանդացին մեծ դժվարությունների է հանդիպել: Հրատարակումից ավելի քան 30 տարի անց դեռ հեղինակի մոտ մնացած է եղել 1000 օրինակ:

Իր կազմած բառարաններից ու բառարանագրական այլ աշխատություններից Նորայր Բյուզանդացին բախտ է ունեցել տեսնելու միայն այս բառարանի տպագրությունը, իսկ մնացած զրեթե բոլորը (բացառությամբ մեկի) մինչև այժմ էլ մնում են անտիպ: Իրանց պսակն է կազմում միջին հայերենի բառարանը, որն ըստ նկարագրողների վիթխարի մի գործ է. «Խառագորհ ստորին հայերենի ի մատենագրութեանց ԹԱ—ԹԷ դարուայ»: Հինգ մեծ հատորներ մարտի արտագրված, տպագրության պատրաստ:

Առաջին հատորը՝ Ա, Բ, Գ գրերը.—1038 էջ:

Երկրորդ հատորը՝ Դ, Ե, Չ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ գրերը.—1157 էջ:

Երրորդ հատորը՝ Խ, Ս, Կ, Զ գրերը.—1478 էջ:

Չորրորդ հատորը՝ Չ, Ղ, Ծ, Մ, Յ, Ն, Ծ, Ո գրերը.—1461 էջ:

Հինգերորդ հատորը՝ Ո, Զ, Պ գրերը.—738 էջ³²:

Շարունակությունը, ցավոք սրտի, չի գտնվել: Մեծ բառարանագիրը, ինչպես երևում է նրա գործունեությունից, նյութեր է հավաքել շատ վաղուց, իր գիտական պարասյունների զրեթե սկզբից, բայց բառարանն սկսել է գրել Ստոկհոլմում 1884 թ. հուլիսի 10-ից³³: Այսպիսի բառարանի պակասը մեղանում խիստ զգալի է: Մեր հարուստ բառարանագրության մեջ միջին հայերենի ձոխ բառապաշարն ամբողջությամբ ամփոփող և բացատրող գործ չկա: Իրքան մեծ պիտի լինեն Բյուզանդացու բառարանի դերը:

Մյուսներն են՝

«Վաղիանոս բժշկապետի բոք, թարգմանելով յարարացի լեզուէ ի հաւ ԹԱ կամ ի ԹԲ գարու.— Մեկնութիւն բառիցդ և հոմանիշքն ի յոյն, յարարացի, ի պարսիկ և ի գաղղիերէն լեզուս»³⁴:

«Հայ Տնկարան, այսինքն հաւարումն հայերէն անուանց ամենայն բուսոց, եթէ այնոցիկ՝ որ կը գտնուին ի գիրս նախնեաց, հանդերձ վկայութեամբք և գաղղիերէն անուամբք, և եթէ այնոցիկ՝ որ միայն ի բերանս զաւառացի հաւոց պահեալ են»³⁵:

³² «Եջմիածին», 1949, մարտ — ապրիլ, էջ 67:

³³ ՏՆ՝ս նույն տեղում, էջ 68:

³⁴ ՏՆ՝ս «Քննասէր», պրակ Երկրորդ, Ստոկհոլմ, 1887, էջ 4:

³⁵ նույն տեղում:

«Քառագիծը գաւառական հայ բարբառոց»³⁶։

Կան նաև բառարանները լրացնող աշխատանքներ, քննադատություն և այլն։

Նորայր Բյուզանդացին ինքն էր հայ դիտական հասարակայնությանը իր աշխատանքի արդյունքներին հաղորդակից դարձնելու բուռն ցանկութեամբ։ Պետք էր հրատարակ հանել ավարտվող երկերը։ Սակայն դա շատ դժվար էր հեռավոր հյուսիսում, իր ժողովրդից մեկուսի ապրող գիտնականի համար։ Նա ելք է որոնում և որոշում է հրատարակել վիճաբանական հանդես ու այդ ճանապարհով հրատարակել իր ուսումնասիրությունները կամ համառոտումով ծանուցել, գաղափար տալ նրանց մասին։ Եվ ահա 1887 թ. ձեռնամուխ է լինում դրան։ 1887 թ. մայիսի 15-ի նշումով լույս է տեսնում սեփական վիճաբանական հանդեսի առաջին պրակը՝ «Քննասէր. ինքնագրութիւնը Նորայրի» անունով։ Անդրադառնալով հանդեսի նպատակներին ու բնույթին՝ հեղինակ-տնօրէնը հավաստում է, որ ներկայացվող նյութը հայոց լեզուն ու հայ մատենագրությունն են լինելու, «նիւթ ընդարձակ և ընդարձակ միջոցներու կարօտ»³⁷։

Այս տրեւոյան մշակը «նախնիք» վերնագրի տակ ծանուցում է իր հանդուգն ծրագրի մասին, այն է՝ ըննել, խմբագրել, գիտականորեն կարգավորել և հրատարակել մեր ողջ մատենագրությունը (ինքնուրույն, թարգմանական)՝ ներառյալ թե՛ գրչագրերը և թե՛ արդեն տպագրվածները, ընդարձակ ծանոթութիւններով ու տեղեկութիւններով, բնագրական համեմատութիւններով։ «Ես ի շատ ամաց, — գրում է նա, — վառելի էի մեծ փափագով նուիրելոյ գիմ բոլոր կեանքս գրչագրաց տպագրութեան... իմ դիտաւորութիւնն էր հինգերորդ դարէն մինչև ցվեշտասաներորդն հրատարակել զամենայն հայերէն մատենագրութիւնս և թարգմանութիւնս հնոց, միջնոց և նորոց՝ ժամանակագրական կարգաւ և վերստին տպագրելով զմիանգամ տպագրելաւ։ Մեն մի հատոր այս Հայ մատենագրութեան (Biblioteca Armena) ճոխացելով պիտի ըլլար կենսագրական տեղեկութեամբ զհեղինակէն, պատմական, աշխարհագրական և հնախօսական ծանօթութեամբ, լուսարանութեամբ, քննադատական տեղեկութեամբ և բնութեամբ ընթերցութեան, հաւարմամբ բառից և յատկարանութեանց հեղինակին կամ թարգմանչին, բաղադրութեամբ բնագրաց (յոյն, ասորի, արաբացի)»³⁸։ Ակսելով այս ծանր աշխատանքը՝ Նորայրը միաժամանակ մտադիր է եղել իր գրքերն ու թղթերը, ինչպես և դրամագլուխը թողնել ուրիշներին, որպէսզի իր մահից հետո նույն ձևով շարունակեն։

Թողած ձեռագրերի մասին եղած տեղեկութիւններից երևում է, որ Բյուզանդացին մատենագրական շատ բնագրեր պատրաստած ունեցել է հրատարակման համար։

Այս հանդեսի նույն պրակում բերվում են «Եզնկայ Կոչրացու» երկու հատուածը սրբագրելով, «Կորիւն վարդապետի հատուած սրբագրելով», «Փաւստոս Բիւզանդ և իւր Պատմութիւնն Հայոց» հոդվածները։ Նորայրը հայտնում է, որ 3 մասից բաղկացած ընդարձակ ուսումնասիրություն է գրել Փաւստոսի մա-

³⁶ Նույն տեղում։ Նորայր Բյուզանդացին ի թիւս այլ աշխատութիւնների սրանք մասին հիշատակում է նաև Հ. Տեր-Աստվածատրյանցին ուղղած պատասխան-նամակում, Տե՛ս «Բաները Հայաստանի արխիվներին», 1962, N 3, էջ 187։ Վերնագրերի միջև որոշ տարբերութիւններ կան. «Ես և երևութիւն հեղինակը հետադարձ փոփոխութիւններ է մտցրել։

³⁷ «Քննասէր. ինքնագրութիւնը Նորայրի», պրակ առաջին, Ստոկհոլմ, 1887, էջ 2—3։

³⁸ Նույն տեղում, էջ 6—7։

սին, որտեղ ջանում է հաստատել, թե Փափստոսի երկր հայերեն մատենագրությունն չէ, այն էլ շորրորդ դարի, ինչպես ընդունում են ոմանք, «այլ հայերէն քարգմանութիւն հինգերորդ դարու յասորի լեզուէ»։ Տվյալ հողվածն աշխատության երկրորդ մասն է, որտեղ խոսվում է այն մասին, թե Փափստոսի երկր երկու հեղինակի գործ է կոչել՝ հույն աշխարհագրագիտի (Փափստոս) և ասորի եկեղեցականի (անանուն)։ Փափստոսը շորրորդ դարի վերջում գրում է իր երկր հունարեն, որը նախ թարգմանվում է ասորերեն և այստեղից էլ հինգերորդ դարում թարգմանվում է հայերեն։

Երկրորդ պրակի (1887, 3 դեկտեմբերի) «Ղևկուցման» մեջ Նորայր Բյուզանդացին հայտնում է, որ հրատարակման համար պատրաստած է եղել Ա. Այսուրյանի քերականության բնութիւնը նվիրված իր աշխատությունը՝ «Տեսութիւն Քննական քերականութեան Հ. Արսենի Այսուրնեան.— Աշխարհաբար հայերէն ի հինգերորդ դարու», սակայն նյութական դրդապատճառներով հետաձգում է հաջորդ պրակի համար։ Այնուհետև թվարկում է իր այն գործերը, որոնք հաջորդաբար պիտի հրատարակվեն հանդեսում։ Այսպես՝ «Եզնիկ Կողբացի և իւր գրուածն Ընդդէմ Աղանդոց», «Մովսէս Խորենացի և իւր Պատմութիւնն Հայոց.— Քանի մը դիտողութիւնք ի Քննական Պատմութիւնն Հայոց Տեառն Ա. Մ. Բարազաշեան», «Պատմութիւն յԱնհայտ հայերէն թարգմանութեանց Յ. Ոսկերեանի Մեկնութեանցն Թղթոց Պաղոսի առ Գաղատացիս, առ Երրայեցիս, առ Թեսաղոնիկեցիս, առ Կորնթացիս, առ Հռովմայեցիս, առ Փիլիմոն», «Թարգմանութիւնք նախնեաց յասորի լեզուէ ի հինգերորդ դարու», «Գաղիանոս բժշկապետի բառք...», «Յաւելուածք և Ուղղութիւնք յիմ Գաղղիերէն-հայերէն բառագիրս», «Դիտողութիւնք և Ուղղութիւնք ի Հայերէն բառարանս», «Հայ Տնկարան...», «Բառագիրք գաւառական հայ բարբառոց»։ Զարմանք շարժող, բայց ընթերցողին անմատչելի մնացած աշխատանք։ Երախտավոր գիտնականը թերևս նախազգացել է, որ այդ գործերը պիտի մնան չհրատարակված և աճապարել է աշխարհին հայտնել գոնե նրանց գոյության մասին։

Հիշյալ պրակում զետեղված երկու հողվածները նվիրված են Մովսէս Խորենացուն։ Դրանք են՝ «Մովսէս Խորենացի յորում ամի գրած է իւր Պատմութիւնն Հայոց», «Մովսէս Խորենացի և թարգմանութիւնք իւր»։ Հեղինակը գտնում է, որ Խորենացին իր երկն սկսել է գրել 486 թ. և ավարտել է 490-ին։ Հիմնվելով յեզակական փաստերի վրա՝ նա ճիշտ կերպով ցույց է տալիս, որ Խորենացին Աստվածաշնչի ու Եվսեբիոսի «Քրոնիկոն»-ի թարգմանիչ չէ. այստեղ էական դեր է կատարել Նորայրի՝ լեզվի նկատմամբ ունեցած պատմական հայացքը։

Ցավոք սրտի, հանդեսի հրատարակման այս շատ օգտակար գործը երկար չի տևել։ Հեղինակ-տնօրինը գրել է, որ հանդեսը կանոնավորապես ու սահմանված ժամանակին հրատարակելու հնարավորություն չունի, քանի որ գուրկ է ամեն տեսակի դյուրութիւններին³⁹։ Երկրորդ պրակից հետո «Քննասէր»-ը դադարում է հրատարակվելուց⁴⁰։

39 Ճե՛ս նույն տեղում, արև ևրկրորդ, էջ 4։

40 Գ. Լեոնյանը այս հանդեսի հրատարակումը նշում է 1887—1888 թթ., 1—3 համարներում։ Տե՛ս «Հայոց պարբերական մամուլը», Երևան, 1934, էջ 23։ Մինչդեռ լույս է տեսել միայն 2 պրակ, 1887 թ.։ Հենց ինքը՝ Նորայր Բյուզանդացին հետագայում Հ. Տեր-Աստվածատրյանցին ուղղած պատասխան-նամակում մինչ այդ լույս տեսած իր աշխատությունների շարքում հիշատակում է «Քննասէր»-ի Ա և Բ պրակները։ Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1962, N 3, էջ 186—187։ Մաշտոցի սնվան մատենագրանոցում կան այդ երկու պրակները, որոնցից օգտվել ենք։

1889 թ. Մոսկվայում լույս տեսնող «Հանդես գրականական և պատմական»-ում տպագրվում է Նորայր Բյուզանդացու «Տեղեկությունք ի գիրս պատմութեան Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողիկ կոչեցելոյ» աշխատությունը, որտեղից կարևոր ենք համարում մեզ բերել Կ. Սղյանցին ուղղած ընծայականի այն հատվածը, որը բնորոշում է հեղինակի հայացքը ձեռագրի որակի մասին: «Ընդհանրապէս կը համարուի՝ ձեռագրի մի պատուականութիւնն իւր գրչութեան հնութենէն կը կախուի.— թէ երկաթագիր օրինակ մը նախամեծար է միշտ քան զնօտրագիր, և նոյն իսկ քան զբոլորգիր.— թէ բազմագոյն ձեռագրաց ընթերցուածն է ընտրելագոյն քան զսակաւագունից: Ես չեմ կարծեր: Ձեռագրի մի արժէք տուողն ոչ այնչափ իւր թուականին հնութիւնն է ըստ իս, ոչ այնչափ երկաթագիր կամ բոլորգիր գրչութիւնն, որչափ զազափարողին հմտութիւնն, հաւատարմութիւնն և մանաւանդ ուշադրութիւնն, թէպէտ ձեռագիրն ըլլայ ԲՃ գարու, թէպէտ ժէ գարու»⁴¹:

1892 թ. մի առանձին աշխատություն է հրատարակում Նորայրը (Հոռոմ). որտեղ բարձրացնում է հայկական մատենագրութեան բնագրերի բնական հրատարակության հարցը՝ ցույց տալով դրա անհրաժեշտությունն ու կարևորությունը⁴²:

Իննսնական թվականներին Նորայր Բյուզանդացին շատ ժամանակ ու աշխատանք է նվիրել պատմահայր Մովսես Խորենացու դատի պաշտպանությանը: Ինչպես հայտնի է, ղեռ սկսած տասնութերորդ դարից՝ առանձին գիտնականներ կարծիք են հայտնել Մովսես Խորենացու՝ ուշ շրջանի (և ոչ հինգերորդ դարի) հեղինակ լինելու մասին: Այդպիսի մտտեցմամբ, Լա Կրոզի ու Գուտշմիտի հետքերով, անցյալ դարի իննսնական թվականներին հանդես եկավ նաև ֆրանսիացի հայագետ Կարիերը: Նա փաստարկ էր բերում այն, որ, իբր Մովսես Խորենացին իր «Պատմութիւն Հայոց»-ը գրելիս օգտվել է ուշ շրջանի աղբյուրներից, ինչպես օրինակ՝ Սոկրատի եկեղեցական պատմության համառոտ և ընդարձակ թարգմանություններից (Փոքր ու Մեծ Սոկրատ) և սրանց կցված՝ Սեղբեստրոսի վարքից և այլն: Սղյանցին և թեր կարծիքներ: Նորայր Բյուզանդացին իր խնդիրը համարեց հանդես գալ և հիմնավորապես հերքել Կարիերի անարդարացի տեսակետը: Եվ իբրև այդ գործի նախապատրաստություն 1893 թ. հրատարակեց մի հոդված՝ «Եւմ կարծիք գերկին հայ թարգմանութեանց եկեղեցական պատմութեան Սոկրատայ սրբյաւտիկոսի և զնոցին թարգմանչաց» վերնագրով⁴³: Այստեղ նա այն կարծիքն էր հայտնում, որ Սոկրատի երկի համառոտ թարգմանությունը (Փոքր Սոկրատ) վերաբերում է վեցերորդ դարին, իսկ ընդարձակ թարգմանությունը (Մեծ Սոկրատ), որ կատարված է յոթերորդ դարում, զգալի չափով ընդօրինակված է առաջինից. վերջինիս թարգմանիչ Փիլոն Տիրակացին (կամ ըստ ոմանց՝ Շիրակացին, Խրակացին) ձեռքի տակ է ունեցել նախորդը և օգտվել է նրանից (թեև «Ազգարար»-ում ընդարձակն է համարվում նախորդողը⁴⁴): Սա պետք էր Կարիերի հիմնական փաստարկը հերքելու համար:

⁴¹ Տե՛ս առանձնատիպ, էջ 9:

⁴² Հմմտ. «Բնաբեր Հայաստանի արխիվներին», 1962, N 3, էջ 186—187:

⁴³ «Հանդես ամսօրյա», 1893, սեպտեմբեր, էջ 273—278:

⁴⁴ Նույն տեղում, էջ 278:

Ապա 1898—1899 թթ. «Մշակ» թերթում հրատարակվում է հոդվածաշար՝ «Հայերէն հին գրականութեան խնդիրներ» ընդհանուր վերնագրով⁴⁵, ամբողջովին նվիրված հորենացու խնդրին: Այստեղ Նորայր Բյուզանդացին հարցերը դնում է ամենայն կրթությունում: Նա հայտարարում է, որ ինքը՝ «Ատոկհոլմի պանդուխտը» բառասուն տարվա ընթացքում մի քանի հարյուր անգամ կարդացած և հիմնովին ուսումնասիրած լինելով հորենացու երկը՝ հաստատ է մնում իր տեսակետին (թեև ժամանակի մեջ մի փոքր փոփոխություն է մտցրել⁴⁶): Վիճարկելով Կարիերի տեսակետը և բնական վերոհիշյալ բնագրերի հայերեն թարգմանությունների օգտագործման հարցը՝ հմուտ բանասերը ցույց է տալիս, որ հորենացու երկն է օգտագործվել թարգմանության համար և ոչ ընդհակառակն: Նա ընդգծում է, որ, անկասկած, հորենացին ծանոթ է եղել Սեղբեստրոսի վարքի հունարեն բնագրին (և ոչ հայերեն թարգմանությանը), Մեսրոպի ներբողը գրելիս օգտվել է այդ բնագրից և նման ձևով է զովաբանել իր մեծ ուսուցչին⁴⁷: Եվ թարգմանիչը նկատելով այդ նմանությունը՝ «... Կր բանայ զայն տեղի Պատմութեանն Հայոց և միով ակամբ նայելով ի հորենացի և միւսով ի յոյն բնագրին, կր թարգմանէ...»⁴⁸: Դրանով էլ բացատրվում են նմանությունն ու ընդհանրությունները:

Բյուզանդացին միաժամանակ հերքում է իրենց տեսակետներով Կարիերին հարած Գ. Տեր-Մկրտչյանի (Միաբան) և Դ. Խալաթյանցի կարծիքները: Նա մեծ բարկությամբ է արտահայտվել Գ. Տեր-Մկրտչյանի մասին, որը եզրակացրել է, թե «678 թուից առաջ հորենացու Հայոց Պատմութիւնը չկար»: Բյուզանդացին գրել է. «... հորենացուց պէս յաղթ մատենագիր մի անհնար է ի հինգերորդ դարէն փոխադրել... Թող պատուական սարկաւազն երջանիկ համարի զանձն որ չի նստիր յաթոռ դատաւորական, ապա թե ոչ՝ զանմեղ մարդիկ առանց բնութեան ի մահ պիտի դատապարտէր»⁴⁹:

Այստեղ ևս օգտագործելով առիթը՝ Բյուզանդացին արծարծել է հին բնագրերի բնական հրատարակության անհրաժեշտության հարցը:

1895 թ. լույս է տեսնում Ղ. Ալիշանի «Հայկական բուսաբառութիւն» աշխատությունը: Նորայր Բյուզանդացին սեղմ ժամկետում (3 ամսում) գրում է զրա բնագատությունը, որը դառնում է մի ամբողջական գիրք՝ «Քննադատութիւն Հայբուսակի»: Նրա համար այդտեղ մեծ դժվարություն չկար, քանի որ ինքը վաղուց արդեն հետազոտել էր համապատասխան նյութը և գրել մի առանձին աշխատություն («Հայ Տնկարան...», տե՛ս վերը): Գ. Լուսինյանի միջոցով այդ քննադատություն-գիրքը հանձնվում է Գ. Մենկիշյանին և այսպիսով անցնում Վիեննայի Մխրթարյան միաբանությանը: Հեղինակը այնուհետև լրացումներ և ուղղումներ է կատարում ու դրանք ուղարկում միաբանությանը, սակայն այլևս հնարավորություն չի ունենում վերջնականապես խմբագրել: Աշխատությունը հրատարակվում է հեղինակի մահից հետո, նախ՝ «Հանդես ամսօրյա»-ում (1921 թ.) և ապա՝ 1925 թ., առանձին գրքով:

Այս ինքնատիպ աշխատության մեջ բացահայտված ու ցույց են տրված Ղ. Ալիշանի գրքում տեղ գտած սխալները: Դրանք հետևյալ բնույթն ունեն՝

⁴⁵ «Մշակ», 1898, N N 192, 193, 195, 203, 206, 216, 217, 237, 1899, N N 16, 17:

⁴⁶ Տե՛ս նույն տեղում, N 192:

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, 1898, N: 237 և 1899 թ., N 16:

⁴⁸ նույն տեղում, 1899, N 16:

⁴⁹ նույն տեղում, N 17:

բառեր, որոնք ներկայացված են որպես բույսերի անուններ, բայց իրականում բույս չեն նշանակում, աղավաղված կամ շեղած անուններ, միևնույն բույսի անունը կրկնված այլևայլ գրությամբ, հոմանիշների ու օտար համարժեքների, իմաստների բացատրման սխալներ և այլն: Ընդամենը 305 գիտողություն:

Չի կարելի ասել, թե Բյուզանդացին իր այդ գիտողությունների մեջ սայ-թարումներ չի ունեցել, բայց ակնբախ է նրա քաջահմուտ լինելը այդ հետաքրքրական բնագավառում, վարակիչ է նրա սերը հայոց լեզվի ճոխ բառապաշարի նկատմամբ ու նրա ուսումնասիրման գործում:

1896 թ. «Լուսնա»-ում տպագրվում է «Լազարայ Փարպեցու Պատմութեան Հայոց Յառաջարան» գործը⁵⁰: Բյուզանդացին այստեղ Փարպեցու պատմութեան առաջարանի հատվածների վերագաստվորում է կատարում և ցույց է տալիս, որ բնագրում կան բնագաստված տեղեր:

Նույն հանդեսում տպագրվում են նաև Բյուզանդացու բանասիրական խոշոր երկի մի գլուխը⁵¹ և «Երևր գիտելիք Յովհաննու Մանգակունույն և մի գիտելիք իմ Գաղղիերէն-հայերէն բառարանիս մասին»⁵² փոքրիկ աշխատանքը: Բյուզանդացին երկար տարիներ նամակագրական կապ է ունեցել հիշյալ հանդեսի խմբագիր Գյուտ Բահանան Աղանյանի հետ և իր մի բանի աշխատությունների հրատարակման խնդրում օգտվել նրա աջակցությունից:

1900 թ. Քիֆլիսում լույս է տեսնում Նորայր Բյուզանդացու բանասիրական մեծ երկը՝ «Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք. Գիրք Մակարայեցուց, Եւթաղ Աղեքսանդրացի, Աղաթանդեղոս և Փաւստոս Բիւզանդ, հանդերձ գիտողութեամբ, տեղեկութեամբ և լուսաբանութեամբ» (էջ Ա—ԻԵ + 1—520): Դա խոշոր երևույթ էր ոչ միայն իր ժամանակի, այլև բնագաստված հայ բանասիրության համար: Չրևոյունելով տառացիորեն նրա մեծ բանասեր հեղինակի եզրակացությունները՝ չենք կարող չընդգծել, որ դա հին բնագրերի բանասիրական-համեմատական բնության մի օրինակելի աշխատանք է:

Հեղինակը գրքի առաջարանում հանդամանորեն խոսում է նրա բնույթի ու առաջ քաշվող հիմնական հարցերի մասին: Հետևելով այլ բանասերների՝ Նորայր Բյուզանդացին պնդում է, որ իբր Աղաթանդեղոսի ու Փաւստոսի երկերը ոչ թե ինքնուրույն, այլ թարգմանական են և ոճի բնագաստված ունեն Կորյունի ինքնուրույն հայանի երկի, մակարայեցիների գրքերի, ինչպես նաև Եվթաղ Աղեքսանդրացու երկի վերջինս ինքն է ավելացնում թարգմանական բնագրերի հետ, ուստի այդ բոլորը մի մարդու՝ Կորյունի գործն են: Նա ժխտում է, որ նմանություններ կարող են հաճախակի կատարված բնթերցանության և նման այլ հանդամանքների հետևանք լինել: Այս ոգով էլ շարադրվում է ամբողջ գիրքը, որը բաղկացած է չորս բնթարձակ գլուխներից: Առաջին երկու գլուխները իրենց ընդգրկած հարցերով հիմք են կազմում բուն համեմատական հետազոտության համար: Առաջին գլխում բնութագրվում են Կորյունի կյանքն ու գործը: Կորյունը ներկայացվում է որպես մատենագիր և թարգմանիչ: Պատմա-բանասիրական ու լեզվաբանական տեսանկյունով վերլուծվում է «վարք մշտոցի» հանրահայտ երկը: Խոսվում է հեղինակի և այլոց կողմից Կորյունին վերագրվող թարգմանությունների մասին (այդ թվում՝ Աղաթանդեղոսի ու Փաւ-

50 «Լուսնա. գրական հանգես», գիրք Բ, 1896, էջ 309—328.
51 Նույն տեղում, 1898, գիրք Բ.
52 Նույն տեղում, 1901, գիրք Բ.

ստոսի երկերի)։ Երկրորդ ղուլիսը նվիրված է 406—462 թթ. վերաբերող ինքնուրույն ու թարգմանական մատենագրության լեզվի ու ոճի բնութագրմանը՝ այդ ընդհանուր շղթայի մեջ Կորյունի տեղն ու դերը վեր հանելու նպատակով։ Դա կատարված է հայագիտական մի խոշոր հայտնագործության օգտագործումով։ Հայտնի է, որ անցյալ դարի քառասնական թվականներից ի վեր Վիեննայի Մխիթարյան միաբանության մեջ մեր հին գրավոր լեզվում դիտվեց մի առանձին շրջան՝ «սուկեղարյան», «մեսրոպյան», «դասական» հայերենի շրջանը, որն ունի մի շարք այնպիսի առանձնահատկություններ, որոնք հատուկ չեն հինգերորդ դարի վաթսուներկու թվականներին հաջորդող գրավոր հուշարձանների լեզվին։ Աստիճանաբար նկատվեց, որ հիշյալ շրջանին վերաբերող երկերն էլ լեզվա-ոճական ընդհանրությունների սահմաններում իրենց հերթին ունեն գանազանություններ (Այտրնյան), ուստի դրանց հիման վրա էլ կատարվեցին ներքին խմբավորումներ (Այտրնյան, Թոռնյան և այլն)։ Նորայր Բյուզանդացին բնականաբար այս ուղիով՝ այստեղ տալիս է այդ շրջանի ինքնուրույն ու թարգմանական գործերի լեզվի ոճաբանական դասակարգումը։ Ընդունում է շորս դաս՝ եզնիկյան, եփոնմյան, կյուրեղյան և կորյունյան (Թոռնյանի կատարածի որոշ վերադասավորումներ)։ Առաջին կամ եզնիկյան դասը, որ ընդգրկում է մեկ ինքնուրույն և քսաներկու թարգմանական գործ, բնորոշվում է հաստատված, կանոնավորությամբ, ներդաշնակությամբ, բառերի ու դարձվածքների բնորոշության ու կապակցման ճարտարությամբ, նույնանիշների ճոխությամբ, տեղ-տեղ անբունագրու գարգերով և այլն։ Երկրորդ կամ եփոնմյան դասը ընդգրկում է ինը թարգմանական գործ, ընդհանրապես հարթ է ու պարզ, բայց զերծ չէ գարգերից ու ավելադրություններից, հաճախ երկարաբան ու ճապաղ, որը հետևանք է նյութական թարգմանության։ Երրորդ կամ կյուրեղյան դասի մեջ հաշվվող բոլոր տասնմեկ գործերն էլ թարգմանական են. այս դասի լեզուն առաջինի նման ճոխ է, բայց ավելի շատ զարդ ու ավելադրություն ունի, իսկ տեղ-տեղ գիշում է հաստատված։ Չորրորդ կամ կորյունյան դասի մեջ են իր բուն իսկ հետազոտության առարկա հանդիսացող գործերը. բայց նրա Կորյունը «սոյն կարգ կը ներկայացնէ միայնակ՝ իւր համառօտ գրութեամբն Վաւր և Բաւնելլոյն Մաշտոցի և իւր շորս թարգմանութեամբը... Եւ աստ և անդ մի և նոյն Կորիւնն է՝ իւր յաճախութեամբ գարդուց ի Մակարայեցիս, ծաղկալից լեզուաւ յԵթաղ, պերճութեամբն և վսեմութեամբ յԱզաթանգեղ, առատութեամբն ի Բիւղանդ, բայց և նոյն թերութեամբը, զխաւորապէս ի մասին գարտուղութեանց և անկանոնութեանց...»։

Մյուս երկու ղուլիսները ներկայացնում են այս վերջին դասի երկերի լեզվի ու ոճի համեմատական հետազոտությունը, որի նպատակը հեղինակի հիմնադրույթի ապացուցումն է, այսինքն թե՛ Կորյունի ձեռքով կատարված թարգմանություններ են Աղաթանգեղոսի ու Փավստոսի պատմությունները և Մակարայեցիների երեք գրքերն ու Եվթաղի երկը (վերջիններս՝ Աստվածաշնչից)։

Երրորդ ղուլիսում Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը համեմատվում է մյուս շորսի հետ՝ առանձին-առանձին, և ցույց են տրվում լեզվա-արտահայտչական ընդհանրությունները. Կորյուն և Ազաթանգեղոս՝ 152, Կորյուն և Փավստոս՝ 15, Կորյուն և Մակարայեցիներ՝ 6, Կորյուն և Եվթաղ՝ 16։ Չորրորդ ղուլիսում՝ Կորյունին վերագրվող իրոր թարգմանական և որպես այդպիսին կարծվող գոր-

ձերն են համեմատվում միմյանց հետ՝ ընդհանրությունների ցուցահանումով, Ազաթանդեղոս և Փավստոս՝ 202, Աղաթանդեղոս և Մակարայեցիներ՝ 65, Աղաթանդեղոս և Եվթաղ՝ 7, Փավստոս և Մակարայեցիներ՝ 126, Փավստոս և Եվթաղ՝ 2, Մակարայեցիներ և Եվթաղ՝ 3: Այսպիսով վեր հանած 624 ընդհանուր արտահայտությունները միաժամանակ նորայր Բյուզանդացին բնում է մեսրոպյան շրջանի մատենագրության խորքի վրա՝ ցույց տալով նրանց յուրահատկություններն ու առնչությունները:

Զարմանք են պատճառում բազմաշխատ հեղինակի՝ հին բնագրերի խոր իմացությունը, մեսրոպյան հայերենի իրողությունների բազմակողմանի ու հստակ պատկերացումը և դրանք իր հետազոտական նպատակներին ծառայեցնելու վարպետությունը: Բայց այդ ամենը չեն խոսում նրա հիմնադրույթի ապացուցման օգտին: Բանասիրական այս երևելի աշխատության արժեքը (որքան էլ տարօրինակ թվա) չպետք է որոնել առաջ քաշված հիմնադրույթի ու նրա հաստատմանն ուղղված ջանքերի մեջ: Երբեք ու երբեք չի կարելի ընդունել, որ Ազաթանդեղոսի և Փավստոս Բյուզանդի երկերը թարգմանություններ են: Նրանք խորապես հայկական են իրենց ամբողջ ոգով, հորինվածքով, բովանդակությամբ, մտածողության զրսերման յուրահատկություններով և առհասարակ բոլոր կողմերով: Եվ մեր բանասիրությունը այժմ դրանում ոչ մի կասկած չունի: Իսկ լեզվա-ոճական ընդհանրություններ միշտ էլ լինում են: Այդպիսիները կարող էին լինել հեղինակների՝ միևնույն դպրոցում ուսած ու նույնպիսի հոգեղեն սնունդ ստացած լինելու, որոշ երկեր հաճախ ընթերցած և միևնույն ուղղության հետևած լինելու արդյունք: Այդպիսի երևույթներ լինում են նաև մեր օրերում: Քիչ չեն դեպքերը, երբ նույն գրողի տարբեր ստեղծագործությունները գրվում են տարբեր ոճով, և, ընդհակառակն, տարբեր գրողներ գրում են նույնպիսի ոճով:

Այլ է նորայր Բյուզանդացու հիշյալ աշխատության արժեքը: Բազմաճմուտ բանասերը, թեև այլ նպատակով, հետադոտել ու մեծ ջանասիրությամբ վեր է հանել մեր հին գրավոր լեզվի պատմության մեսրոպյան շրջանի լեզվա-ոճական բազմաթիվ արժեքավոր փաստեր, որոնք խիստ կարևոր են հայոց լեզվի գիտական պատմության ստեղծման համար: Նա վերստին հաստատել է մեր գրավոր լեզվի պատմության այդ ուրույն շրջանի գոյությունը՝ իր տարբեր զրսերումներով:

Նշանավոր բանասեր Ն. Ակինյանն անդրադառնում է այն հարցին, թե ինչպես նորայր Բյուզանդացին հանգեց մեսրոպյան հայերենի ընդունման տեսակետին: «...Անկեղծությամբ զարդն է իր ճակատին, — գրել է նա նորայրի մասին, — կր սիրել ջշմարտությամբ, այսու միայն կրցաւ Բագրատունւոյ դպրոցի աշակերտն ըմբռնել օսկեղարեան ուրոյն հայերէնի մը գոյութիւնը Ե դարու սահմանին մէջ»⁵⁴: Պետք էր ընդգծել նաև մի կարևոր հանգամանք՝ պատմական հայացքը լեզվի նկատմամբ: նորայր Բյուզանդացին որպես հետազոտող պատմական հայացք է ունեցել հայոց լեզվի նկատմամբ և այդ մոտեցմամբ կարուպացել է զանազան նրա զարգացման տարբեր շրջաններն իրենց առանձնահատկություններով:

Այս խոշոր մենագրության հրատարակությունից հետո հեղինակի կենդանության օրոք առանձին գրքով այլևս որևէ աշխատություն յույս չտեսաւ: Զա-

⁵⁴ Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1921, էջ 96:

նազան պարբերականներում ու ժողովածուներում տպագրվեցին մի քանի աշխատանքներ, որտեղ շոշափվում են բանասիրական մի շարք հարցեր, ներկայացվում բնագրեր և այլն:

«Գրիգոր Մագիստրոսի «Գամագտական» թղթին մեկնությունն ի նմին իսկ ի Մագիստրոսէ»⁵⁵ գործում տրվում են մատենագիտական հարուստ տեղեկություններ, բացահայտվում է «Գամագտական»-ի բնույթը: Ցույց է տրվում, որ դա գրական քմահաճ խաղ չէ, այլ մի նամակ՝ ուղղված հույն դպիր Կիրակոսին. նրա պարբերությունների սկզբնատառերը կազմում են հեղինակի անունն ու տիտղոսը: Կիրակոսը շահականալով նամակի բովանդակությունը՝ խնդրել է Մագիստրոսին՝ բացատրել պարզ լեզվով, և Մագիստրոսը գրել է մի բացատրական նամակ՝ «Առ Կիրակոս յոյն դպիր», որով հնարավոր է բացատրել «Գամագտական»-ի խրթին բնագիրը: Նորայր Բյուզանդացին այստեղ բերում է այդ երկու բնագրերը և զուգահեռելով բացատրում: Բ լրումն գրա, հմուտ գիտնականը վերջում տալիս է բառերի մեկնությունները:

1901 թ. հրատարակում է Դավիթ Սալաձորեցու «Գովասանք ծաղկանց» երկի բնագիրը՝ միաժամանակ տեղեկություններ տալով ուշ միջնադարի այդ բանաստեղծի կյանքի, գործի, ինչպես նաև նրա հիշյալ երկի հրատարակությունների մասին⁵⁶:

«Բազմավեպ»-ում տպագրած վերջին աշխատության մեջ (1905 թ., տե՛ս վերը) Նորայր Բյուզանդացին հանդամանորեն ցույց է տալիս, որ Թովմա Արծրունու անունով մեզ հասած պատմության բնագիրը միաձույլ ամբողջություն չէ, իր մեջ ամփոփում է երկու տարբեր երկեր, որոնք պատկանում են տարբեր հեղինակների՝ Թովմա Արծրունուն և Անանուն Արծրունուն: Բարեխիղճ ուսումնասիրողը հարկ է համարում տեղեկացնել, որ բանասիրության մեջ այդ մասին ակնարկվել ու համանման կարծիք հայտնվել է (Հ. Շմավոնյան, Բրոսե), սակայն դա իրեն հայտնի է դարձել ավելի ուշ՝ Բրոսեի կատարած ֆրանսերեն թարգմանությունը և Հ. Գալեմբյարյանի «Պատմություն հայ լրագրության» աշխատությունը ստանալուց հետո: Հիշենք նաև, որ Բյուզանդացին այստեղ ևս անդրադառնում է հին բնագրերի քննական հրատարակության հարցին և բնորոշ օրինակներով ցույց է տալիս, թե բանասիրությանն ինչ օգուտ կարող է բերել այդ շատ կարևոր ձևնարկումը:

Բյուզանդացու գրչին պատկանող վերջին աշխատությունը «Քննություն Մալխասեան հրատարակությանց Ազաթանգեղոսի և Ղազարայ Փարպեցույ» հոդվածն է⁵⁷, որը նվիրված է «Պատմագիրք Հայոց» շարքի մեջ մտնող Ազաթանգեղոսի (1909) և Ղազար Փարպեցու (1904) երկերի բնագրերի հրատարակություններին: Հեղինակը գտնում է, որ զրանք քննական հրատարակություն չեն և շատ սխալներ են պարունակում: Քննադատում է զրանք՝ սկսած ձեռագրական այլընթացումների օգտագործման, լեզվա-ոճական իրողությունների մեջ կողմնորոշվելու և նման այլ հարցերից մինչև ուղղագրությունը: Այստեղ ուշագրավ է այն հատվածը, որտեղ նշվում է, թե ի՞նչ պայմանների հաշվառումով պետք է պատրաստել քննական հրատարակության բնագիրը: Բյուզանդացին գտնում է, որ որևէ բնագիր գիտականորեն հարգարելու համար ձեռա-

55 «Բանասեր», 1900, պրակ Բ, էջ 119—140:

56 Նույն տեղում, 1901, պրակ Բ և Գ, էջ 87—150:

57 Հրատարակված է «Նուշարձան»-ում: Տե՛ս վերը:

գրերի համեմատությունից բացի, պետք է այն լիովին ուսումնասիրել. պետք է գաղափար կազմել մատենագրի դարաշրջանի ու պատրաստության մակարգակի մասին, հաշվի առնել լեզվական առանձնահատկությունները, այսինքն թե բառերի, դարձվածքների, քերականական ձևերի գործածության մեջ հեղինակը ի՞նչ նախասիրություններ ունի և որո՞նք են սովորական նրա համար. նկատի ունենալ նույն բառի ու դարձվածքի տարբեր դրսևորումները, համեմատել ճիշտն ու սխալը, քննել և աչքի առաջ ունենալ նույն հեղինակի ուրիշ գործերի համանման իրողությունները, դրանք զուգադրել համապատասխան ժամանակաշրջանի այլ մատենագիրների երկերի տվյալների հետ. ուշադրություն դարձնել նաև հետագա դարերի այն բնագրերի վրա, որոնց մեջ օգտագործված է տվյալ բնագիրը և այլն: Այսպիսի լուսարանումներով ու փոխադարձ ճշգրտումներով միայն կարելի է վերջնականապես հրապարակ հանել բնագիրը՝ իբրև քննական հրատարակություն:

Հին բնագրերի քննական հրատարակումը այսօր էլ մնում է հայ բանասիրության առաջնահերթ խնդիրներից մեկը: Ի՞նչ այդ տեսանկյունից այս ցուցումները այսօր էլ արդիական են հնչում ու գործնական նշանակություն ունեն:

Անշուշտ, մի հողվածով դժվար է լիովին բնութագրել այս մեծ բանասերի թեկուզ և միայն հրապարակված գիտական վաստակը: Հետագայում, ամենայն հավանականությամբ, դրան կնվիրվեն մենագրություններ: Սակայն ընդհանուր անդրադարձն էլ ցույց է տալիս, որ նորայր բյուզանդացու մի քանի տասնամյակի եռանդագին ու արդյունաշատ աշխատանքի շնորհիվ շատ ու շատ արժեքներ են ստեղծվել հայագիտության համար՝ հարստացնելով ու տարբեր ուղղություններով զգալի շափով առաջ տանելով այն: Հին ու բազմիցս կրկնված խոսք է՝ մարդն իր գործով է հիշվում. ուրեմն երախտագիտությամբ հիշենք այս բազմաշխատ մշակին:

ЖИЗНЬ И НАУЧНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ НОРАЙРА БЮЗАНДАЦИ

(К 120-летию со дня рождения и 50-летию со дня смерти)

Доктор филол. наук А. А. АБРААМЯН

(Р е з ю м е)

Огромно научное наследие Норайра Бюзандаци. В его филологической работе можно выделить два основных направления.

1. **Текстология** — уточнение, восстановление, освещение первоисточников, определение их подлинности, установление их авторов, выяснение историко-хронологических, языковых, стилистических и других вопросов.

2. **Лексикография и лексикология** — составление словарей с изучением вопросов словарного состава, научной терминологии, форм и смыслового значения слов, достоверности их использования и др.

Среди корифеев армянской классической филологии Норайр Бюзандаци занимает достойное место. Благодаря его плодотворной научной деятельности, продолжавшейся несколько десятилетий, арменистика обогатилась многими ценными достижениями.